

եւ արդէն այս ժամանակ գտնուելու էր (բաց ի իշխող՝ եկեղեցական եւ աշխարհական դասակարգէն) նաեւ ժողովրդեան մէջ մաս մը վրածէս հայերու: Վրական եկեղեցւոյ վերաբերող այս Հայք արդիւնք ունին թէ վրական եւ թէ հայ գրականութեան համար, հայերէնէ թարգմանած են բազմութիւ գործեր, որոնք հետզհետէ աւելի երեւան կու գան: Յաւել վրական գրաւոր ու արձանագիր յիշատակարանաց մէջ յիշուած նշանաւոր անձանց մեծագոյն մասը՝ Բազրատունեաց եւ առ հասարակ հայ աւագանւոյ սովորական անուններէն զատ (Բագարատ, Սմբատ, Ատրներսեհ եւն եւն) յս ճախ զուտ հայկական անուններ կը կրեն (Զոջիկ պատրիկ եւն): Այս իրերը հոս չենք կրնար աւելի մանրամասնել: Արդ Բիւզանդացիք սխալ քաղաքականութիւն մը սկսան ժԱ. դարուն, եւ կործանեցին Հայաստանի Բազրատունեաց թագաւորութիւնը եւ քայքայեցին նաեւ Տայոց իշխանութիւնը¹: Տայոց Դաւիթ Մեծ կիւրապաղատը († 1000ին), թունաւորուած յունասէր

¹ Հմմտ. ի միջի այլոց Aram Akoulian, Einverleibung armenischer Territorien durch Byzanz im XI. Jahrh. Gruningen 1912.